

ԼՈՒՅՍ

Մշակութային և հասարակական ամսագիր

لویس

LOUYS

Armenian Monthly

ISSN 1682-5446

ԱԼԵԹՍԱՆԴՐԱՊՈԼԻՑ ԳՅՈՒՄՐԻ



194, Դեկտեմբեր 2014 թ.

No 194, Dec. 2014

شماره ۱۹۴ دی ماه ۱۳۹۳

Այս համարում

Հայերեն բաժին

1- Հայաստան.....	1
2- Արցախ.....	11
3- Արեւմտյան Հայաստան.....	12
4- Մփյուռք.....	12
5- Միջազգային.....	13
6- Հասարակական.....	16
7- Խոհեր.....	20
8- Գծանկարչություն.....	21
9- Առածանի.....	21

Պարսկերեն բաժին

1- Առաջին աշխարհամարտը եւ իրանահայությունը.....	1
2- Լուրեր.....	1-3



Շապկի առաջին էջում՝ Ալեքսանդրապոլից Գյումրի
Վերջին էջում՝ Լույս են տեսել Էդ. Բաղդասարյանի նոր գրքերը

Համար 194, Դեկտեմբեր 2014 թ.

No. 194, December 2014

ماهنامه لویس - شماره ۱۹۴ دی ماه ۱۳۹۳

ԼՈՒՅՍ

Մշակութային եւ հասարակական ամսագիր

Արտոնատեր եւ գլխավոր խմբագիր՝

Էդ. Բաղդասարյան

Փոստարկը 15875-9488 Թեհրան - Իրան

Էլեկտրոնային փոստ՝ louys_monthly@yahoo.com

Ինտերնետային հասցեն՝ www.louysonline.com

LOUYS

Armenian Cultural and Social Monthly

License-holder and Editor-in-Chief

Ed. Baghdasarian

www.Edic-Baghdasarian.com

POBox 15875-9488 Tehran – Iran

E-mail : louys_monthly@yahoo.com

Internet : www.louysonline.com

Թերթի Գինը՝ Հատավաճառ - 5000 ռիալ

Բաժանորդագրություն՝

Իրան՝ մեկ տարի՝ 60,000 ռիալ

Արտասահման՝ մեկ տարի՝ 50 ԱՄՆ դոլար

Հոդվածների հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել խմբագրության տեսակետներին:
Արտատպության դեպքում հղումը «ԼՈՒՅՍ» - ին պարտադիր է:

Երբ անհետանում է ազգային միտքը

1988թ. Սպիտակի ավերիչ երկրաշարժի հետեւանքով զոհվեց 25. 000 մարդ , անօթեւան մնաց՝ 514.000-ը: 24 տարի անց էլ Գյումրիում դեռ շարունակում են ապրել երկրաշարժի ու նրա հետեւանքների հետ: Աղետի թողած հետեւանքները կամաց-կամաց վերանում են, սակայն կա մի հետք, որը կրում է իր մեջ, իր հոգում ցանկացած գյումրեցի: Դա հոգեբանական այն սպին է, որը կա անգամ հետերկրաշարժյան տարիներին ծնված սերնդի մեջ:

Սփյուռքում հաճախ ենք ականատես լինում՝ իրենց «մարդ», «ազգային» եւ այլ հորջորջումներով անվանով անձանց ու կազմակերպությունների անվայել, ապազգային և հակամարդկային վերաբերմունքին: 1988 թ. դեկտեմբերի 7-ի Սպիտակի երկրաշարժի ճիշտ օրերին սփյուռքյան այդպիսի էակներ խրախճանքի ծրագրեր են մշակում, թե իրենց կյանքը հաճելի դարձնելու եւ թե նյութական միջոցներ կլանելու կամ վատնելու ուղղությամբ:

Երբ խոսք է գնում աշխարհի 10,000,000 հայերի մասին, դա իրոք պիտի չափազանցում գնահատել: Ինչո՞վ են նրանք հայ: Ազգին օգնելով, ազգին ու ազգային առիթները հիշելով: Հայոց լեզվին հարգելով: Ազգային արժեքները հարգելով, և այն, և այլն: Դեռ չենք խոսում «Ազգային» կուսակցությունների կողմից յուրացրած երկրաշարժի աղետյալների համար հանգանակված խոշորագույն գումարների յուրացման մասին, որոնք լկտիորեն մոռացության են ենթարկվել ու նրանց յուրացողները այսօր հաճախ են երեւան գալիս ՀՀ պետական շքանշաններով եւ ՀՀ Նախագահի, վարչապետի ու Սփյուռքի նախարարի կողքին բազմելով: Այդ կազմակերպությունների ապազգային սեւ գործերը մենք երեւան բերեցինք ու փաստեցինք մեր 2000-2001 թվականների համարներում, երբ հրատարակվեցին «Լույսի» առաջին համարները, սակայն արդեն 26 տարի անց նրանք լկտիորեն չեն փոխանցում այդ գումարները իրենց հասցեատերներին: Ցավալի է, երբ այս օրերին Հայաստանի հեռուստատեսություններում հաճախ ենք տեսնում այդ վերջին գայլերին գառան տեսքով, գովաբանվելով կամ անտեղյակ, կամ էլ համագործակցող հանցագործ տարրերի կողմից:

Երբ շատ դեպքերում բացակայում են այդ հատկանիշները, էլ ի նչ 10 միլիոնի մասին է խոսքը:

Հայաստան

Վերիչ երկրաշարժից 26 տարի անց. Հարյուրավոր ընտանիքներ դեռ տնակներում են ապրում



Դեկտեմբերի 7-ին տեղի ունեցած վերիչ երկրաշարժից անցել է ուղիղ 26 տարի: 10 բայանոց երկրաշարժից ամենաշատր տուժել է Հայաստանի երկրորդ մայրաքաղաքը, որտեղ գոհերի թիվը եղել է մոտ 15-17 հազար: Ասում են, որ Գյումրիում 1988թ.-ից հետո նախ եւ առաջ մարդկանց հոգեբանությունն է փոխվել. հումորի եւ արվեստի քաղաքն այսօր տխուր է, կիսաքանդ ու անմխիթար, իսկ պաշտոնական տվյալներով՝ 431 ընտանիք՝ առանց տանիքի: Մինչդեռ որոշ հաշվարկներով՝ այսօր մոտ 4000 ընտանիք դեռ բնակվում է փայտե ու թիթեղյա տնակներում, որոնց պայմանները անտանելի են դառնում հատկապես ձմռանը: Ոչ միայն տնակներում, այլև նոր բնակարաններ ստացած գյումրեցիներն են բողոքում կենցաղային տարրական պայմանների բացակայությունից: Դեռ ամռանը Գյումրի այցելեց վարչապետ Հովիկ Աբրահամյանը, որին գյումրեցիները մեծ վրդովմունքով դիմավորեցին եւ հայտնեցին բնակարանների թերությունների մասին՝ բարձրաձայնելով նաեւ, որ սեփականության վկայականներ էլ դեռ չեն ստացել: Չլուծված խնդիր է մնում նաեւ ճանապարհների ասֆալտապատումը: Եթե չլիներ 2013թ.-ի դեկտեմբերի 2-ին ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի պաշտոնական այցը Գյումրի, քաղաքի կենտրոնական փողոցները կշարունակեին մնալ անբարեկարգ: Արվարձանային փողոցների մասին խոսելն իսկ ավելորդ, Գյումրի այցելող ցանկացած մարդ այդ մասին գիտի եւ փորձում է քաղաքի կենտրոնից շատ չհեռանալ: Մինչդեռ մարզի պատասխանատուները հավաստիացնում են, որ լայնածավալ շինարարություն է իրականացվում մարզկենտրոնում:

«Շատ հարցեր լուծվել են, այս տարիների ընթացքում ավելի քան 300 մլն դոլարի ներդրում է կատարվել, բնակարանների համար գրանցված մարդկանց մեծ մասն արդեն տուն ունի. մնացել է 431 ընտանիք, որոնք նույնպես շուտով բնակարան կտանան: Իհարկե, սա չի նշանակում է, որ տնակները վերացել են», - NEWS.am-ի թղթակցի հետ գրույցում ասաց Շիրակի մարզպետ Ֆելիք Ցոլակյանը:

Նրա խոսքով՝ մարդկանց հոգեբանությունն էլ կամաց-կամաց փոխվում է դեպի լավը:

Նշենք, որ երկրաշարժը տեղի է ունեցել դեկտեմբերի 7-ին առավոտյան ժամը 11:41 րոպեին: Ուժգնությունը էպիկենտրոնում գնահատվել է 10 բալ: Այն ընդգրկել է ՀՀ տարածքի մոտ 40%-ը, ուր ապրում էր 1 մլն. մարդ: Վերման գոտին, որտեղ երկրաշարժի ուժգնությունը կազմել է 8 բալ եւ ավելին, ընդգրկել է երեք հազար քառ. կմ տարածություն: Տուժել են 21 քաղաք եւ շրջան, 342 գյուղ: Անօթեւան են մնացել 514 հազար մարդ: Տարբեր աստիճանի վնասվածքներ են ստացել մոտ 20 հազար մարդ, որոնցից հոսպիտալացվել են 12 հազար 5 հարյուր մարդ, զոհերի թիվը կազմել է 25 հազար մարդ: Չոհեր շատ են եղել հատկապես Գյումրիում՝ մոտ 15-17 հազար եւ Սպիտակում՝ 4 հազար մարդ:

1988թ.-ի ՄՊԻՏԱԿԻ ԵՐԿՐԱՇԱՐՄԸ

1988թ. դեկտեմբերի 7-ին Հայաստանի Հանրապետության հյուսիսային շրջաններում տեղի է ունեցել վերիչ երկրաշարժ, որը հետագայում անվանվել է Սպիտակի երկրաշարժ: Երկրաշարժի հետևանքով զանգվածային վնասվածքների և փլուզումների են ենթարկվել հազարավոր շինություններ, այն տասնյակ հազարավոր մարդկանց նահատակման պատճառ է դարձել: Սպիտակի երկրաշարժը տեղի է ունեցել Փոքր Կովկասի բարձրավանդակում գլխավոր Կովկասյան լեռնաշղթայի առանցքից մոտավորապես 150 կմ դեպի հարավ: Փոքր Կովկասի տեկտոնական և երկրաբանական կառուցվածքային ուղղությունները զուգահեռ են գլխավոր Կովկասյան շղթային հյուսիս-արևմտյան, հարավ-արևելյան ուղղությամբ: Տեկտոնական դրույթը հիմնականում բարդ է, բայց ընդհանուր առմամբ այն բնորոշվում է երկրի կեղևի սեղմամբ ու խտացմամբ, Արաբական և Եվրասիական սալերի տեղաշարժերի պատճառով:



1988թ. դեկտեմբերի 7-ի Սպիտակի երկրաշարժի նման ավերիչ ուժի երկրաշարժեր երկրագնդի վրա, միջին հաշվով, տարեկան լինում են 15-20 հատ: Ինչպես ամեն մի ուժեղ երկրաշարժ, այնպես էլ Սպիտակի երկրաշարժը, ունի իր որոշակի առանձնահատկությունները:

Սպիտակի երկրաշարժը տեղի է ունեցել 1988թ. դեկտեմբերի 7-ին, Գրինվիչի ժամանակով ժամը 7 անց 41 րոպե 22,7 վայրկյան (տեղական ժամանակով 11 անց 41րոպե 22,7 վրկ.): Ուժգնությունը էպիկենտրոնում գնահատվել է 10բալ: Սպիտակի երկրաշարժը պատկանում է այսպես կոչված լրիվ ցիկլի երկրաշարժերին՝ նախացնցումներ, հիմնական ցնցում, հետցնցում:

Երկրաշարժը ընդգրկել է ՀՀ տարածքի մոտ 40%-ը, ուր ապրում էր 1մլն. մարդ: Ավերման գոտին, որտեղ երկրաշարժի ուժգնությունը կազմել է 8 բալ և ավելին, ընդգրկել է երեք հազար քառ. կմ տարածություն: Տուժել են 21 քաղաք և շրջան, 342 գյուղ: Անօթեւան են մնացել 514 հազար մարդ: Տարբեր աստիճանի վնասվածքներ են ստացել մոտ 20000 մարդ, որոնցից հոսպիտալացվել են 12500 մարդ, զոհերի թիվը կազմել է 25000 մարդ: Զոհեր շատ են եղել հատկապես Գյումրիում (մոտ 15-17 հազար) եւ Սպիտակում (4հազ) մարդ: Ավերվել է ՀՀ-ի ամբողջ բնակֆոնդի 17%-ը, դադարել են գործել 170 արդյունաբերական ձեռնարկություն, մեծ վնաս է հասցվել գյուղերին և ագրոարդյունաբերական համալիրին: Մեծ վնաս է հասցվել նաև ճարտարապետական, պատմական, արվեստի հուշարձաններին, տուժել է ժողկրթության 917 օջախ:



Անսպասելի աղետը հանկարծակիի բերեց ծայրահեղ իրավիճակում գործելու կոչված կազմակերպություններին և ծառայություններին: Կազմակերպված փրկարարական աշխատանքները հունի մեջ մտան 2-3 օր հետո: Երկրաշարժի առաջին րոպեներից անձնուրաց աշխատում էր ազգաբնակչությունը: Սակայն նրանց փորձի և շատ հաճախ ծայրահեղ իրավիճակներում գործելու տարրական գիտելիքների պակասը բացասաբար էին անդրադառնում փրկարարական աշխատանքների արդյունավետության վրա, երբեմն պատճառ դառնում անտեղի զոհերի: Խիստ զգացվում էր անհրաժեշտ փրկարարական տեխնիկայի պակասը: Ազգաբնակչության և փրկարարների ջանքերով փլատակներից, զոհված կամ կենդանի, հանվել է ավելի քան 45000 մարդ, հոսպիտալացվել 12500 մարդ:



Վնասների հիմնական պատճառներն են՝

1. Հանրապետության ողջ տարածքում թերագնաատված էր սեյսմիկ վտանգը, քանի որ մասնագետների կողմից այդ գոտու սեյսմիկ վտանգը գնահատված էր 7-8 բալ և դա այն դեպքում, երբ 1988թ երկրաշարժի ուժգնությունը Սպիտակում գնահատվեց 10, Ստեփանավանում՝ 9, Վանաձորում՝ 8-9 բալ:
2. Աղետի հետևանքներն ուսումնասիրող հատուկ կառավարական հանձնաժողովը հայտնաբերել է, որ թույլ էին տրված որոշակի սխալներ շենքերի եւ կառույցների նախագծման ժամանակ: Այսինքն՝ խախտված էին սեյսմակայուն շինարարության չափանիշներն ու կանոնները:
3. Ցածր է եղել շինարարության որակը: Կոպտորեն խախտվել է շինարարության տեխնոլոգիան, շինանյութերը չեն համապատասխանել պետստանդարտին:
4. Երկրաշարժի ժամանակ Գյումրի քաղաքի տարածքում գետնի տատանման գերակշռող պարբերության մեծությունը կազմել է մոտավորապես 0,4-0,8 վրկ., որը շատ մոտ է բարձրահարկ շենքերի հիմնական ձևերի սեփական տատանումների պարբերությունների մեծություններին: Նման դեպքերում առաջ են գալիս, այսպես կոչված, ռեզոնանսային անցանկալի երևույթներ՝ բերելով տատանումների ամպլիտուդաների աճին եւ շատ հաճախակի շենքերի փլուզմանը:
5. Երկրաշարժի տեւողությունը (մինչեւ 5 րոպե) եւ կրկնվող ցնցման փաստը, որի դեպքում շինությունների մեծամասնությունը չհասցրեցին "վերականգնվել" հիմնական ցնցումից:
6. Տատանումների ուղղահայաց բաղադրիչների զգալիությունը:
7. Թերագնահատվել է տարածքի սեյսմիկ վտանգը, հաշվի չեն առնվել տեղանքի ինժեներա-երկրաբանական պայմանների առանձնահատկությունները:
8. Շատ զոհերի պատճառ դարձան փրկարարական աշխատանքների ձգձգումն ու ոչ ժամանակին կազմակերպումը:
9. Ազգաբնակչության համապատասխան հմտությունների եւ իրազեկման բացակայությունը էքստրեմալ պայմաններում:

Վեր հանելով հազարավոր անտեղի գոհերի եւ մեծ ավերումների հիմնական պատճառները, նպատակ ունենք ամեն մի քաղաքացու մեջ զգոնություն արթնացնել: Պետք է, թեև ուշացած, բայց հիմնավոր դասեր քաղել մեծ ողբերգությունից, քանի որ թույլ տրված սխալները անհաշիվ են, իսկ սխալներ թույլ տվողները՝ աններելի շատ:

Ինչպիսին է Գյումրին այսօր

07.12.2014



1988թ. դեկտեմբերի 7-ի ավերիչ երկրաշարժից Գյումրին հայտարարվեց աղետի գոտի: Ժամանակի ընթացքում ավերված քաղաքում որոշ աշխատանքներ կատարելուց հետո քաղաքը դարձավ վերականգնման գոտի: Հիմա կարծես թե քաղաքին որեւէ անուն չի տրվում. հարյուրավոր ընտանիքներ շարունակում են ապրել աղետալի պայմաններում:



«Ամոթի օրը» Գյումրիում. շատ պաշտոնյաներ կրկին բացակա էին

07.12.2014



1988թ. երկրաշարժի 26-րդ տարելիցին այսօր՝ դեկտեմբերի 7-ին, Գյումրիում աղետի զոհերին իրենց հարգանքի տուրքը մատուցեցին քաղաքային, մարզային իշխանությունների ներկայացուցիչներ հազարավոր գյումրեցիներ:

Գյումրեցիները NEWS.am-ի հետ գրույցում բողոքեցին, որ, ինչպես նախորդ տարի, այս տարի նույնպես, շատ պաշտոնյաներ անտեսել են իրենց:

«Ու՛ր է Աշոտ Աղաբաբյանը, Արմանը Սահակյանը, Հովիկ Աբրահամյանը: Թե՛ Գյումրին չիղեն՝ ուրդեղ է: Թողնիս մենակ Աղաբաբյանը ակտիվիստներին վրա տա: Դե արի, մեր վիշտը հարգե, դու անմեղ զոհ չունի՛ս»-ասաց գյումրեցի Ռազմիկ Եղոյանը:

Գյումրեցիներին բարկացրել էր նաև այն, որ ՀՀ նախագահ Մերժ Մարգարյանը եւ երկրորդ նախագահ Ռոբերտ Զոհարյանը ծաղկեպսակներ էին ուղարկել՝ անձամբ Գյումրի գնալու փոխարեն: Գյումրիում էին ԱԺ գյումրեցի պատգամավորներ Մարտուն Գրիգորյանը, Սուքիաս Ավետիսյանը:

ԱԺ ՀՀԿ խմբակցության պատգամավոր Սուքիաս Ավետիսյանի խոսքով՝ երկրի ղեկավարի բացակայությունը չի նշանակում, թե նա չի հարգում աղետի զոհերի հիշատակը:

«Միայն այս տարի երկրի ղեկավարը երկու անգամ եղել է Գյումրիում: Կարծում եմ, որ այդ այցելություններն ավելի կարելու էր են, քանի որ կոնկրետ խնդիրներ են քննարկվում, լուծումներ են տրվում, պարտադիր չէ, որ հենց այդ օրը այցելություններ լինեն: Իսկ մյուս պատգամավորների հետ կապված՝ կասեմ, որ ամեն մարդ ինքն է որոշում, դա անձնական խնդիր է, գուցե զբաղված են», - NEWS.am-ին ասաց պատգամավորը:

Նշենք, որ արդեն երկրորդ տարին է՝ գյումրեցիները դեկտեմբերի 7-ը «ամոթի օր» են կոչում՝ հիմնավորելով, որ երկրի ղեկավարությունը 26 տարիների ընթացքում չկարողացավ լիովին վերականգնել քաղաքը, վերացնել Գյումրիում այն տնակային ավանները, որտեղ հազարավոր գյումրեցիներ են ապրում անմարդկային պայմաններում:

Նշենք, որ նախորդ օրը Գյումրի կատարած այցելությունից հետո «Ժառանգություն» կուսակցության ղեկավար Բաֆֆի Հովհաննիսյանն ու Չարուհի Փոստանյանը չէին վերադարձել Երևան, այսօր նրանք եւս մասնակցեցին

երկրաշարժի անմեղ զոհերի հիշատակին մատուցված տուրք պատարագին:

Նշենք, որ երկրաշարժը տեղի է ունեցել 1988թ. դեկտեմբերի 7-ին՝ առավոտյան ժամը 11:41 րոպեին: Ուժգնությունը էպիկենտրոնում գնահատվել է 10 բալ: Այն ընդգրկել է ՀՀ տարածքի մոտ 40%-ը, ուր ապրում էր 1 մլն. մարդ: Ավերման գոտին, որտեղ երկրաշարժի ուժգնությունը կազմել է 8 բալ է ավելին, ընդգրկել է երեք հազար քառ. կմ տարածություն: Տուժել է 21 քաղաք եւ շրջան, 342 գյուղ: Անօթեւան է մնացել 514 հազար մարդ: Տարբեր աստիճանի վնասվածքներ է ստացել մոտ 20 հազար մարդ, որոնցից հոսպիտալացվել է 12 հազար 5 հարյուրը, զոհերի թիվը կազմել է 25 հազար մարդ: Չոհեր շատ են եղել հատկապես Գյումրիում՝ մոտ 15-17 հազար եւ Սպիտակում՝ 4 հազար մարդ:

Սրտառույ պատմություն. 3-ամյա Նարեկը երկրաշարժից 5 տարի անց գտավ ծնողներին

07.12.2014



Գյումրեցի Աբրահամյանների ընտանիքում 1988թ. երկրաշարժից կորուստներ չեն եղել, փոխարենն ընտանիքը մեկ անդամով ավելացել է. ընտանիքի հայրը՝ Հովհաննես Աբրահամյանը փյառալների տակից 3-ամյա տղայի է փրկել:

«Երկրաշարժից հրաշքով ենք փրկվել՝ ես, կինս ու ծնողներս: Կնոջս ծնողներին ման կուզայինք, ամենքս մի փողոցով կերթայինք, երբ հասա տեքստիլի շենքի մոտ, լացի ձեն լսեցի. երեխա էր լաց լինում: Ձենի ուղղությունը գտա ու տեսա, որ շատ փոքր երեխա էր ընկած քարերի արանքում՝ ձեռքը ջարդած: Գրկեցի ու տարա: Մենք էլ ժամանակ երեխա չունեինք, բարեկամներս կսեին՝ գտնիք ում երեխեն է, ով է, բայց էլ ժամանակ անհնար բան էր գտնելը», - NEWS.am-ին պատմեց Հովհաննես Աբրահամյանը:

Երկրաշարժից տունը կորցրած Աբրահամյանները տղային Նարեկ են անվանել, նրա հետ տարիներ շարունակ ապրել են ավտոտնակում: 5 տարի անց տղայի ծնողներն անսպասելի հայտնվել են:

«Եղորոս հետ մի քանդած զարածում հարմարվանք, էլ երեխեն էլ՝ հետներս, տարիները մի կերպ, յոյա գնալով անցան: 1993 թ. էր, ես արդեն իմ երեխան ունեցա, Նարեկն էլ 8 տարեկան էր: Ամառ էր, մի օր մեկը դուռը խփեց, կինս բացեց: Անձամոթ էին, ներկայացան՝ ովքեր էին, ու մենք մոլորվանք. Նարեկի ծնողներն էին», - պատմեց Հովհաննես Աբրահամյանը:

8-ամյա տղային դժվարությամբ են համոզել գնալ իսկական ծնողների հետ ապրելու, Աբրահամյանները հետագայում նրա կնքահայրն ու կնքամայրն են դարձել:

«Մենք էդ ընտանիքի հետ մոտ ենք, Հայկը այսքան տարիներ անց մեր տուն գնում գալիս է, մենք էլ իր ծնողների առաջարկով դարձանք իր կնքահայրն ու կնքամայրը», - պատմեց Հովհաննես Աբրահամյանը:

Նշենք, որ երկրաշարժը տեղի է ունեցել դեկտեմբերի 7-ին առավոտյան ժամը 11:41 րոպեին: Ուժգնությունը էպիկենտրոնում գնահատվել է 10 բալ: Այն ընդգրկել է ՀՀ տարածքի մոտ 40%-ը, ուր ապրում էր 1 մլն. մարդ: Ավերման գոտին, որտեղ երկրաշարժի ուժգնությունը կազմել է 8 բալ է ավելին, ընդգրկել է երեք հազար քառ. կմ տարածություն: Տուժել են 21 քաղաք եւ շրջան, 342 գյուղ: Անօթեւան են մնացել 514 հազար մարդ: Տարբեր աստիճանի վնասվածքներ են ստացել մոտ 20 հազար մարդ, որոնցից հոսպիտալացվել են 12 հազար 5 հարյուր մարդ, գոհերի թիվը կազմել է 25 հազար մարդ: Չոհեր շատ են եղել հատկապես Գյումրիում՝ մոտ 15-17 հազար եւ Սալիտակում՝ 4 հազար մարդ:

Ավարտվել է Օձունի տաճարի վերականգնումը

01.12.2014

Հայաստանի Լոռու մարզի Օձուն գյուղի 6-րդ դարի ՄԲ Մարիամ Աստվածածնի եկեղեցու վերականգնողական աշխատանքները հաջողությամբ ավարտվել են: Կատարող «ԼեւԳուկ» ընկերությունն ուժեղացրեց շինությունը ներքին ամրացման մեթոդով՝ սահմանափակելով արտաքին տեսքի միջամտությունը թռուցիկ շտկումներով՝ դրմերի մաքրում եւ որակը կորցրած կրաշաղախի փոփոխություն:

«Մենք ավելի շուտ հնագույն տաճարի բուժմամբ էինք զբաղված, քան նորոգմամբ: Չանում էին նվազագույնս խառնվել շենքի կառույցին, որպեսզի պահպանվի նրա ճարտարապետական եւ պատմական արժեքը», - ասաց «ԼեւԳուկ» ՓԲԸ գործադիր տնօրեն Լեւիկ Դուկասյանը, որն արդեն վերականգնել է քսանից ավելի հայկական եկեղեցիներ եւ վանահամալիրներ:

Օձունի եկեղեցուն, որը կանգուն էր 15 դար, սպառնում էին ճեղքերը եւ տանիքին ու դրմերի վրա Լոռու խոնավ կլիմայի պատճառով աճած բույսերի արմատները: Շատ տեղերում շաղախն ի սպառ լվացվել էր: Վերանորոգման երկարաձգումը կհանգեցներ տաճարի քանդմանը արտաքին գործոնների ազդեցությամբ, որոնց հավանականությունը երկրաշարժավտանգ այս տարածքում շատ բարձր է:

Ըստ Լ.Դուկասյանի, ներքին ամրացման ինքնատիպ մեթոդների մշակմանը մասնակցել են լավագույն հայկական ճարտարագետները եւ Միլանի (Իտալիա) պոլիտեխնիկական ինստիտուտի մասնագետները: Աշխատանքի ընթացքում կիրառվել են ապակեմանրաթելային ճոպաններ եւ գործվածքներ, որոնց միջոցով ամրացվել են գմբեթը, վեղարը եւ դրմերը: Կոռոզիայի ավերիչ ազդեցությունից խուսափելու համար վերանորոգողները փոխարինել են նախկին երկաթյա ամրանները բարձրարդյունավետ եվրոպական տսսինձներով: Նախապատրաստական աշխատանքների ընթացքում բացահայտվել են 6-րդ դարի քանդակների դրվագներ եւ կղմինդր, հին կենցաղի առարկաներ: Բացի այդ, վեղարի տակ պահպանվել է գինու շիշ՝ Աբովյան եղբայրների միջոցներով 1889 թ. իրականացված վերանորոգման արդյունքների մասին գրությամբ: Փաստաթուղթը

փոխանցվել է Մատենադարան վերականգնման եւ ուսումնասիրման համար:

Լեւիկ Դուկասյանն ընդգծեց, որ կատարողների եւ պատվիրատուի՝ ծագումով Լոռու տարածաշրջանից մոսկովյան գործարար Մովսես Չավարյանի միջեւ համագործակցությունը, նա է տրամադրել տաճարի վերականգնման միջոցները, չափազանց արդյունավետ էր եւ վստահության արժանի:

«Նման վերականգնում իր ծավալով եւ տեխնիկական լուծումներով Հայաստանում դեռ չէր եղել: Հաջողվեց փրկել եւ ժառանգների համար պահպանել մեր պատմաճարտարապետական գույնգործոցը: Մենք շնորհակալ ենք «ԼեւԳուկ» ընկերությանը, որը հաջող ավարտին հասցրեց վերականգնման աշխատանքների ողջ համալիրը: Լրացուցիչ նախագծի հաստատումից հետո այս ընկերությունը կբարենորոգի ջրահեռացումը տաճարի արտաքին գավիթներում, եւ այդ դեպքում մեր առաքելությունը կարելի է համարել ավարտված: Հույս ունենք, որ բարենորոգված Օձունի մարզարիտը կանգուն կմնա բազում դարեր», - ասաց «Օձունի վերածնունդ» ծրագրի համակարգող Արմեն Դավթյանը:

Հայ կոմունիստները վերընտրել են կուսակցության ղեկավարությանը

29.11.2014



Հայաստանի կոմկուսի 39-րդ համագումարի արդյունքում, որը տեղի է ունեցել այսօր՝ նոյեմբերի 29-ին, կուսակցության ղեկավարությունը վերընտրվել է:

ՀԿԿ կենտրոնական կոմիտեի առաջին քարտուղար է վերընտրվել Տաճատ Մարգարյանը, Կենտկոմի քարտուղարներ են ընտրվել Երջանիկ Ղազարյանը, Գագիկ Մանուկյանը, Դոնարա Նալբանդյանը եւ Անդրանիկ Դուկասյանը:

Բացի նրանցից, ՀԿԿ կենտկոմի բյուրոյի անդամներ են դարձել եւս 8 հոգի: Կարելի է արձանագրել, որ ՀԿԿ ղեկավարությունը փաստացի մնացել է անփոփոխ:

Ավելի վաղ NEWS.am-ը հայտնել էր, Երեւանում, կառավարության նիստերի դադարում այսօր տեղի է ունեցել Հայաստանի կոմկուսի 39-րդ համագումարը:

Ազգային ժողովը վավերացրեց ԵՏՄ-ին միանալու մասին պայմանագիրը

04.12.2014

Ազգային ժողովն այսօր՝ դեկտեմբերի 4-ին, ձայների մեծամասնությամբ վավերացրեց ԵՏՄ-ին Հայաստանի անդամակցության մասին պայմանագիրը, հաղորդում է NEWS.am-ի թղթակիցը:

Կողմ է քվեարկել 103 պատգամավոր, դեմ՝ 7, ձեռնպահ՝ 1 պատգամավոր:

Այդ ընթացքում ԱԺ շենքի դիմաց բողոքի ակցիա է ընթանում ընդդեմ Հայաստանի ԵՏՄ անդամակցության:

Նշենք, որ Ռուսաստանի, Բելառուսի եւ Ղազախստանի կողմից ՀՀ անդամակցության պայմանագրի վավերացումներից հետո Հայաստանը 2015-ի հունվարի 1-ին կդառնա ԵՏՄ լիիրավ անդամ:

Հայկական դասակը ներգրավվել է խաղաղապահ առաքելությանը

12.12.2014



Լիբանանում կայացել է «Լիբանանում Միացյալ Ազգերի Կազմակերպության ժամանակավոր ուժեր» (ՅՈՒՆԻՖԻԼ) բազմազգ առաքելության կազմում հայկական դասակի ներգրավման եւ առաքելությանը մասնակից այլ երկրների դրոշների շարքում հայկական դրոշի բարձրացման պաշտոնական արարողությունը:

Հայ խաղաղապահների 32 հոգանոց դասակը ս.թ. նոյեմբերի 26-ից ՅՈՒՆԻՖԻԼ առաքելության կազմում, իտալական հրամանատարության ներքո խաղաղապահ առաքելություն է իրականացնում Լիբանանում:

Արարողության ընթացքում հայ խաղաղապահներին ողջունել եւ նրանց ներգրավումն առաքելությանը կարելուրել է ՅՈՒՆԻՖԻԼ առաքելության միացյալ ուժերի հրամանատար, իտալական բանակի բրիգադի գեներալ Ստեֆեն Դեյ Կոլր:

Նշված արարողությունն իր անդրադարձն է գտել նաև Իտալիայի զինված ուժերի գլխավոր շտաբի պաշտոնական կայքում:

Սեյրան Օհանյանը ՉԺՀ դեսպանի հետ քննարկել է ռազմական համագործակցությունը

12.12.2014



ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյան, այսօր՝ դեկտեմբերի 12-ին, ընդունել է Հայաստանի Հանրապետությունում Չինաստանի Ժողովրդական Հանրապետության նորանշանակ արտակարգ և լիազոր դեսպան Տյան Էրունին:

ՀՀ պաշտպանության նախարարը շնորհավորեց դեսպանին՝ պաշտոնը ստանձնելու կապակցությամբ, մաղթելով նրան նորանոր հաջողություններ պատասխանատու առաքելության մեջ, և հույս հայտնեց, որ հայ-չինական ռազմաքաղաքական երկխոսությունը կշարունակվի երկկողմ հարաբերությունների ամրապնդման և համագործակցության ոլորտների ընդլայնման ուղղությամբ: Հանդիպման ընթացքում կողմերը կարծիքներ փոխանակեցին նաև տարածաշրջանային և միջազգային անվտանգության հարցերի շուրջ:

Lուրեր Հայաստանից - NEWS.am

Ադրբեջանի գործողություններին հայկական կողմը պետք է շեշտակի պատասխանի. Կոմանդոս

11.12.2014



Ադրբեջանը երբեք չի հանգստանալու եւ միշտ լարվածություն է պահելու սահմանին: Այս մասին NEWS.am-ի թղթակցի հետ գրույցում ասաց Արցախյան պատերազմի հերոս, գեներալ-լեյտենանտ Արկադի Տեր-Թադևոսյանը՝ Կոմանդոսը:

Նա նշեց, որ ըստ լրատվամիջոցների՝ Ալիեի վիճակն էլ այնքան լավ չէ, նա կարող է ամեն բույն հեռանալ, մնում է իր տեղում Ռուսաստանի միջոցով եւ այժմ խնդիր ունի ցույց տալու, որ գործ է անում:

Կոմանդոսը նշեց, որ ադրբեջանական կողմի ցանկացած դիվերսիոն փորձի հայկական կողմը պետք է շեշտակի պատասխանի: «Լարվածությունը միշտ էլ կլինի, մենք պետք է միշտ պատրաստ լինենք, պարբերաբար հարված հասցնենք նրանց, որ իրենք հասկանան, որ մենք պատրաստ ենք բոլոր այն պրովոկացիաներին, ինչ իրենք անում են», - ասաց Կոմանդոսը:

Ավելի վաղ հայտնել էինք, որ ադրբեջանական կողմը դեկտեմբերի 8-ին, հերթական դիվերսիոն գործողությունն է ձեռնարկել դարաբաղա-ադրբեջանական շփման գծում: Այս մասին հայտնել էին NEWS.am-ի աղբյուրները:

Մեր տեղեկություններով՝ ադրբեջանական կողմն ունի առնվազն 5-7 գոհ: Հայկական կողմից գոհվել է մեկ գինձառայող, 19-ամյա Գարիկ Իսպիրյանը:

Մահացել է Սամվել Մկրտչյանը

07.12.2014



55 տարեկան հասակում կյանքից հեռացել է հայտնի գրող, հրապարակախոս, թարգմանիչ Սամվել Հենրիկի Մկրտչյանը:

Ս.Մկրտչյանը ծնվել է 1959 թվականին Թալինում: Ավարտել է Լենինականի (այժմ՝ Գյումրի) թիվ 20 միջնակարգ դպրոցը, այնուհետև՝ Վ. Բոլյուսովի անվան համալսարանը (1983): Աշխատել է «Աստղիկ» հանդեսում, ինչպես նաև «Անդրադարձ», «Ար», «Առավոտ», «Գրական թերթ» պարբերականներում: Հայաստանում և արտերկրում տպագրել է բազմաթիվ հրապարակախոսական հոդվածներ, բանաստեղծություններ, պատմվածքներ, նաև թարգմանել է բազմաթիվ գրքեր:

2002 թվականից «Արտասահմանյան գրականություն» թարգմանական եռամսյա հանդեսի գլխավոր խմբագիրն է: Հայաստանի գրողների միության անդամ է 1995 թվականից: «Կանթեղ» մրցանակի դափնեկիր է: Հոգեհանգստի արարողությունը տեղի կունենա վաղը՝ դեկտեմբերի 8-ին, ժամը 18:00-ին Քանաքեռի Սուրբ Հակոբ եկեղեցում:

LUKRE.HY Հայաստանից - NEWS.am

Փոխնախարար. Իրան Էլեկտրաէներգիայի մատակարարման հետ կապված խնդիրներ չեն լինի

07.12.2014

Իրան Էլեկտրաէներգիայի մատակարարման հետ կապված խնդիրներ չկան եւ չեն սպասվում: Այս մասին NEWS.am-ի թղթակցին հայտարարեց Հայաստանի էներգետիկայի փոխնախարար Իոսիֆ Իսայանը՝ պատասխանելով Իրան Էլեկտրաէներգիայի արտահանման եւ գազի ներկրման ծավալների նվազման պատճառների մասին հարցին:

«Խնդիրներ չկան, դրանք առավելագույնն օպերատիվ հարցեր են: Մենք գազ ենք ստանում եւ Էլեկտրաէներգիայով վերադարձնում ենք, իսկ նոյեմբերին ավելացնելու ենք մատակարարումների ծավալը», - հայտարարեց Իսայանը:

Հիշեցնենք, որ մաքսային վիճակագրության տվյալներով, 2014 թվականի առաջին 3 եռամսյակների ընթացքում Իրան Էլեկտրաէներգիայի արտահանումը 1034-ից նվազել է մինչեւ 767 մլն կՎտ/ժ-ի, իսկ գազի ներմուծումը 316.200-ից մինչեւ 291.400 խորանարդ մետր (ծավալների հարաբերակցությունը կարող է տարբերվել, եթե փակվի նախորդ ժամանակահատվածի պարտքը): Գազը, որի 1 խորանարդ մետրը ստացվում է 3 կՎտ/ժ Էլեկտրաէներգիայի փոխարեն, օգտագործվում է Երևանի ՋԷԿ-ի աշխատանքի համար: Այդ կերպ ստացված Էլեկտրաէներգիայի ավելցուկը մտնում է Հայաստանի էլեկտրացանց:

20 օր կոմայի մեջ գտնվելուց հետո վախճանվել է Լավրենտի Բարսեղյանը

06.12.2014



Ինսուլտից հետո շուրջ 20 օր կոմայի մեջ լինելուց հետո դեկտեմբերի 5-ի լույս 6-ի գիշերը կյանքի 77-րդ տարում վախճանվել է Հայոց Ցեղասպանության թանգարան-ինստիտուտի հիմնադիր-տնօրեն, պատմական գիտությունների թեկնածու Լավրենտի Բարսեղյանը: Այս մասին NEWS.am-ի թղթակցին հայտնեց Մանկավարժական համալսարանի հասարակայնության հետ կապերի վարչության պետ Դիանա Մարկոսյանը:

Հոգեհանգստի օրը առայժմ ճշտվում է, նախնական տեղեկություններով՝ այն կարող է լինել դեկտեմբերի 8-ին: Լավրենտի Բարսեղյանը հայ պատմաբան է, պատմական գիտությունների դոկտոր, Հայոց Ցեղասպանության թանգարան-ինստիտուտի հիմնադիր-տնօրենը, ով 1959

թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանը: Նա 1968-1972 թթ. ղեկավարել է Էրեբունի ամրոցի, Գառնիի տաճարի, Հովհաննես Թումանյանի տուն-թանգարան (Գսեղ) վերականգնման աշխատանքները: 1973-1978 թթ եղել է ՀԽՍՀ մշակույթի նախարարության մշակութայության վարչական հիմնարկների վարչության պետ, 1978-1985 թթ.՝ ՀԱՊԹ տնօրեն, 1984-1985 թթ.՝ միաժամանակ՝ ՀՊՊԹ տնօրեն: 1988-1991 թթ. զբաղեցրել է ՀԽՍՀ Նախարարների խորհրդին առընթեր պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության և օգտագործման գլխավոր վարչության պետի պաշտոնը, 1992-1995 թթ.՝ ՀՀ ԳԱԱ փոխնախագահ: Լավբենտի Բարսեղյանը մի շարք թանգարանների գիտական ցուցադրությունների հեղինակ է: Նրա Աշխատությունները վերաբերում են հայ ժողովրդի ծագման ու կազմավորման հարցերին նվիրված պատմագիտական և արդյուրագիտական հետազոտությունների ամփոփմանը, Հայոց ցեղասպանությանը:

Անընդունելի է Ավստրալիայի Հայոց Թեմը դատապարտում է Երուսաղեմի Պատրիարքին

05.12.2014



Ավստրալիայի և Նոր Զելանդիայի Հայոց Թեմի Թեմական Խորհուրդը տարածել է պաշտոնական հայտարարություն, որում խոր մտահոգություն է հայտնել Երուսաղեմի Հայոց Պատրիարքի վերջին հրապարակային նամակի առիթով: Հայտարարությունում, մասնավորապես, ասվում է. «Ավստրալիոյ և Նոր Զելանդիայի Հայոց Թեմի Թեմական Խորհուրդը խոր հիասթափությամբ մտահոգում է Երուսաղեմի Հայոց Պատրիարք Նուրհան Արք. Մանուկեանի կողմէ հրապարակուած ողջմտութենէ հետո նամակով՝ ուղղուած ընդդէմ Ամենայն Հայոց Հայրապետին, Եպիսկոպոսաց բարձրագոյն ժողովին և բարձրաստիճան եկեղեցականներու: Թեմական Խորհուրդի մը պարտականութեան ծիրին մէջ չէ Պատրիարքի և Ամենայն Հայոց Կաթողիկոսի միջեւ եղած խնդիրներուն միջամտիս ըլլալ: Սակայն նկատի առնելով որ Նուրհան Արք. Մանուկեան Պատրիարքը Երուսաղեմի Հայոց, իր նամակը Ամենայն Հայոց Կաթողիկոսին համաճանգի միջոցաւ տարածած է աշխարհով մէկ, նաեւ որ Ավստրալիայի մէջ կան բազմաթիւ նախկին Սուրբ Տեղեաց քաղաքացիներ , որոնք մտահոգուած են ստեղծուած այս շփոթով, մանաւանդ որ Թեմիս Առաջնորդի անունն ալ շահարկուած է սոյն գրութեան մէջ, ստիպեցին մեզի կատարել սոյն յայտարարութիւնը: Նախ, ռեւէ անձի առաւել եւս բարձրաստիճան եկեղեցականի չի պատշաճիր նման ոճով, լեզուով և դարձուածքներով արտայայտուիլ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հասցէին նոյնիսկ եթէ՛ ճշմարիտ կէտեր ըլլային իր ըսածին մէջ: Պատշաճ և Պարտ է

որ մարդ չիջնէ շուկայի մակարդակին այլ պահպանէ տարրական քաղաքավարութիւնը յօգուտ Հայ Եկեղեցւոյ ընդհանուր շահերուն: Նման արտայայտութիւն կը պահարակէ նոյն ինքն զայն գողոր: Նուրհան Պատրիարք երկու երեւոյթներ կը նշէ որպէս առիթ իր գայրոյթին: Առաջին՝ Պարետ Ծ. Վրդ. Երեցեանի եպիսկոպոսութեան հարցը: Ծիշտ է որ Երուսաղեմի Տնօրէն ժողովը ներկայացուցած է Հայր սուրբի թեկնածութիւնը եպիսկոպոսութեան՝ Էջմիածին, Ամենայն Հայոց Կաթողիկոսը արդէօք իրաւունք չունի նայելու թէ ենթական արժանի է կամ ոչ: Մարդիկ այն Թեմերէն ուր Հայր Սուրբը պաշտօնավարած է լաւ չեն արտայայտուած անոր մասին եւ նոյնիսկ Առաջնորդներ տուեալ թեմերու չեն պաշտպանած անոր թեկնածութիւնը. տակաւին տարիներ առաջ Հայր Սուրբը երբ ժառանգաւորացի տեսուչ էր աշակերտներ ծեծելու խնդրաբարոյց դէպքով դատրեցուած է իր պաշտօնէն: Մեզի չիյնար Հայր Սուրբը պաշտպանել կամ մեղադրել, սակայն Պատրիարքի պարտականութիւնն է իր միաբանը պաշտպանել և ձեւեր գտնել իր նպատակին հասնելու. այս գրութիւնը աւելի վնաս կը բերէ և Հայր Սուրբին և Պատրիարքին: Նուրհան Սրբազան կրնար սորվիլ իր ուսուցիչն՝ Եղիշէ Պատրիարքէն, անցեալին անոր ալ եպիսկոպոսութեան ներկայացուցած միաբանները մերժուեցան Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմէ, Եղիշէ Պատրիարք որոշ ժամանակ համակերպեցաւ սակայն ժամանակը և ձեւը գտաւ Վեհափառ Հայրապետի իր իսկ առած որոշումը վերանայիլ տալու: Երկրորդ հարցը կանոնական բնոյթ ունի, տարիներէ ի վեր Ամենայն Հայոց Կաթողիկոսութիւնը կ'աշխատի ընդհանուր օրէնսդրութիւն մը հաստատել մեր ողջ եկեղեցւոյ համար, այս ուղենիչը վերջին երկու մասնակի Թեմական-Պատգամաւորական ժողովներու քննարկման նիւթ եղաւ (այս ժողովներուն մասնակցած են մեր բոլոր առաջնորդները և Թեմական աշխարհիկ պատգամաւորները 134 անձ, ինչ որ զայն կը դարձնէ ժողովրդավարական և օրինական պատկառելի մարմին մը) և ամէն մէկ կէտ կամ դրոյթ քուէի դրուելով է որ որդեգրուեցաւ: Այս տարուան Սեպտեմբերի ժողովին Երուսաղեմի միաբանները որոշ կէտերու վերաբերեալ վերապահուած արտայայտեցին և ժողովը առիթ տուաւ որպէսզի անոնք մտածէին և համաձայնութեան եզր մը գտնուէր և ժողովի աւարտին թուեցաւ թէ այդ համաձայնութիւնը եղած էր. սակայն ի գարնանը բոլոր ժողովականներուն՝ Երուսաղեմէն տեղացած բողոքի կարկուտն էր՝ Պատրիարքի գրչով: Ինչպէս Միքայէլ Սրբազան բացատրած է իր գրութեան մէջ հարցը շատ յստակ է ինչպէս առաջ, նոյնն է և այսօր. այսինքն Երուսաղեմի Հայոց Պատրիարքութիւնը մաս կը կազմէ Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցիին Ի գլուխ ունենալով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը և անոր Գահակալը, որուն և ենթակալ են ևս Երուսաղեմի և Պոլսոյ Պատրիարքութիւնները ի հոգեւորս: Պատրիարքութիւնները ինքնավար են, այսինքն իրենց ներքին գործերուն մէջ ազատ են տնօրինելու ինչ որ հարկ է, սակայն ինքնագլուխ չեն, այսինքն չեն կարող խօսիլ ընդհանուր Հայ Եկեղեցիի անունով կամ ներկայացնել Հայ Եկեղեցին: Եթէ Էջմիածինը խանութի Երուսաղեմի գործերուն այն կը բխի և Սուրբ Յակոբի և ընդհանուր Հայ Եկեղեցւոյ շահերէն: Օրինակ մը անցեալէն երբ խնդիրը ներսէն ծագած է, երբ ձեռագիրներու գողութեան հարցը եղաւ, Էջմիածինը կանգնեցաւ պաշտպանելու Սուրբ Յակոբի շահերը. արտաքին միջամտութիւն՝ երբ Իսաարայելեան բանակը փորձէց Պարոն Տերի Վանքապատկան կայուածը խլել կամ բաժնետէրով անօգուտ դարձնել, Էջմիածինը իր թեմերով ոտքի կանգնեցաւ պաշտպանելու Սուրբ Յակոբի իրաւունքները: Եթէ նոյնիսկ դրոյթներ կան այս ուղենիչի մէջ որոնք չեն յարմարիր Երուսաղեմի Հայոց Պատրիարքութեան, Պատրիարքը կարող է այդ հարցերը առանձին քննարկել Ամենայն Հայոց Հայրապետին հետ կամ ներկայացնել ժողովին, որուն և Համանախագահն է ինք: Պատրիարքի նամակը նման քայլի նշոյլ մը իսկ չի թելադրէ: Հարցը Պատրիարքին է, պարտէ՞ք իջած էք պտուղ ուտելու՞ թէ պարտաբար ծեծելու... Ինչ կը վերաբերի մեր Առաջնորդին Պատրիարքի կցած ածականին, շատ դիւրին է ռեւէ անձ վատաբանել կամ մեղադրել, կարելի է արդէօք մէկ օրինակ բերել անոր նիւթապաշտութիւնը հաստատելու. Հայկազուն Սրբազան իր երկար

պաշտոնավարության ընթացքին ԱՄՆ Արևելեան Թեմի մեջ որևէ ծուխ է նման «որակավորում» չէ ստացած, երբ կարիքը եղաթողուց իր պաշտոնը եւ գնաց ծառայելու Մայր Աթոռ Պատրիարքի Ամենայն Հայոց Կաթողիկոսի հրաւերին անսայով, առանց հարցնելու թէ Մայր Աթոռը ինչպէս պիտի վարձատրէր զինք, իսկ այսօր որպէս Առաջնորդ Աստրալիոյ եւ Նոր Զելանտայի Հայոց թեմին, շատ աւելի նուազ կը վարձատրուի քան Ֆիլատէֆիա հովիւ եղած ժամանակ, չնայած իր պաշտոնավարած աշխարհագրական ընդարձակ տարածքին եւ բազմազբաղութեանը: Գուցէ Պատրիարքը այլ բաներ գիտէ՝ կուզէինք լուսարանուիլ...

Հայկազուն Սրբազան ծառայած է Մայր Աթոռին եւ Վազգէն Ա, եւ Գարեգին Ա եւ կարող է նաեւ ծառայել Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսին, անոր համար Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինն է մնայուն Սրբութիւնը, Կաթողիկոսներ ժամանակաւոր պահապաններն են այդ Սրբութեան: Հայկազուն Սրբազանին Եպիսկոպոսութիւն առաջարկուած է եւ Վազգէն Ա Կաթողիկոսէն 1991-ին, եւ Գարեգին Ա Կաթողիկոսէն 1997-ին, եւ Գարեգին Բ Կաթողիկոսէն 2000-ին, եթէ ան փառքէ կամ Եպիսկոպոսացաւ: տառապէր այս առիթները չէր փախցներ...

Նորիսան Պատրիարք անխոհեմօրէն այս յոյժ վտանգաւոր եւ անտեղի երկպառակութիւնը ստեղծեց մեր Եկեղեցւոյ մէջ, կ'աղօթենք որ Ան իմաստութիւն եւ խոհեմութիւն ունենայ եւ միջոցներ գտնէ այս շփոթը վերացնելու...

Աստրալիոյ եւ Նոր Զելանտայի Հայոց Թեմի Թեմական խորհուրդը անընդունելի կը համարէ Երուսաղէմի Հայոց Պատրիարքի նման անհանդուրժողական կեցուածքը, որը միանգամայն պառակտիչ կրնայ ըլլալ, եւ միանալով Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ անդատանին մէջ խաղաղութեան կոչով հանդէս եկող շատ հայորդիներու՝ կ'աղօթէ առ Բարձրեայն Աստուած, որպէսզի կրկին սէր եւ համերաշխութիւն տիրէ Հայրապետական եւ Պատրիարքական այրոջներու միջեւ»:

**Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի
Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
Ս Փ Յ Ո Ւ Ռ Ք Ի
Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
Մ Ա Մ Ո Ւ Լ Ի Ե Վ
Հ Ա Ս Ա Ր Ա Կ Ա Յ Ն Ո Ւ Թ Յ Ա Ն Հ Ե Տ
Կ Ա Պ Ե Ր Ի Վ Ա Ր Չ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն**

25.12.2014թ.

**ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանի
տարեկան
հաշվետու մամուլի ասուլիսը**

Դեկտեմբերի 25-ին տեղի ունեցավ ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանի տարեկան ամփոփիչ մամուլի ասուլիսը:

Նախարարը տեսաշարով ներկայացրեց նախարարության կողմից իրականացրած ծրագրերը: Նա նշեց, որ նախարարության նախաձեռնած ծրագրերը բոլորն էլ կատարվել են, իսկ առանձին դեպքերում գերազանցվել են նախանշված ցուցանիշները: Նա ընդգծեց, որ նախարարությունը գործակցում է 21 համահայկական կազմակերպությունների և կառույցների հետ և այս տարի սեպտեմբերի 19-21-ն անցկացված Հայրենիք-Սփյուռք V-րդ համաժողովը համախմբեց ու աշխարհի 62 երկրից Հայրենիք բերեց հայկական կազմակերպությունների ու կառույցների 1100 ղեկավարների և ներկայացուցիչների:

Նախարարն ասաց, որ ՀՀ սփյուռքի նախարարությունը իրականացրել է 2014թ. երեք գերակա խնդիրներից բխող միջոցառումներն ու ծրագրերը:

Նախարար Հրանուշ Հակոբյանը կարևորեց 2014թ. հուլիսի 7-ից օգոստոսի 2-ը Երևանում կայացած «Սփյուռք»

ամառային դպրոց ծրագիրը, որն ընթացել է 6 ուղղություններով՝ Հայոց լեզվի արագացված ուսուցում, Սփյուռքի ուսուցիչների վերապատրաստում, ազգային երգի ու պարի դասընթացներ, սփյուռքահայ երիտասարդ առաջնորդների ամառային դպրոց, սփյուռքահայ լրագրողների ամառային դպրոց, Սփյուռքի համայնքային գործի կազմակերպիչների դասընթացներ: Ծրագրին մասնակցել են 222 սփյուռքահայ՝ աշխարհի 22 երկրից:

Հուլիս-հոկտեմբեր ամիսներին իրականացվել է «Իմ Հայաստան» համահայկական փառատոնը, որին մասնակցել է՝ նախատեսված 1000-ի փոխարեն, շուրջ 1500 սփյուռքահայ՝ աշխարհի 16 երկրից: «Իմ Հայաստան» փառատոնն իր մեջ ներառել է. «Պարավեստի օրեր» (հուլիսի 1-10-ը, 37 պարախույժ՝ աշխարհի 12 երկրից), «Խմբերգային արվեստի օրեր» (օգոստոսի 1-5-ը, աշխարհի 9 երկրից ժամանած 15 և Հայաստանյան 4 երգչախումբ), «Ամուսնի երեկո» (օգոստոսի 16-ին, 20 ասմունքող՝ աշխարհի 5 երկրից), «Գուրուկի փառատոն» (սեպտեմբեր 20-24-ը, 14 դուրուկահարներ՝ աշխարհի 5 երկրից և Արցախից), «Հայ երգի օր» (սեպտեմբերի 25-ին, 30 երգիչներ և երաժիշտներ Սփյուռքից և Հայաստանից) փառատոններ:

2014թ. Սփյուռքի երիտասարդների հայրենաճանաչության «Արի տուն» ծրագիրն ընթացել է 8 փուլով, նախատեսված 1000-ի փոխարեն մասնակցել է 1071 երիտասարդ՝ աշխարհի 31 երկրից, այդ թվում՝ առաջին անգամ Դիարբեքից ժամանած 48 իսլամացած հայերից բաղկացած խումբը, դրանից գատ՝ ծրագրի ճամբարային փուլին մասնակցել են նաև Արցախից 80, Միսիանից՝ 20 և հայաստանյան հյուրընկալ ընտանիքներից՝ 200 երիտասարդներ:

Նախարար Հրանուշ Հակոբյանը հանգամանալից անդրադարձավ «Սփյուռքահայերի ինտեգրման գործընթացի կազմակերպում» ծրագրին, նշեց, որ լուծվել են Հայաստանում հաստատված, սիրիահայերի, իրաքահայերի, Ուկրաինայից և այլ երկրներից եկած սփյուռքահայերի բազմաթիվ իրավական, սոցիալական, առողջապահական, կրթական խնդիրներ, կազմակերպվել են մշակութային միջոցառումներ: Փոփոխություններ են կատարվել մի շարք իրավական ակտերում, որոնք վերաբերել են ՀՀ մուսթի արտոնագրի ստացմանը, կացության կարգավիճակ ձեռքբերմանը, պետական տուրքերի վճարմանը և այլն: 2014թ. հունվար-հոկտեմբեր ամիսներին ՀՀ քաղաքացիություն է ստացել 3300 սիրիահայ:

Տարվա ընթացքում իրականացվել է «Մեր Մեծերը» ծրագիրը: Կազմակերպվել են բազմաթիվ միջոցառումներ նվիրված 2014թ. հանրահռչակված «Մեր Մեծեր»-ին (Կոմիտաս, Հովհաննես Թումանյան, Սիամանթո, Արշիլ Գորկի, Գալուստ Կյուլայենկյան):

Կազմակերպվել է 9 համաժողով: Իրականացվել են երեք տարածաշրջանային՝ «Մերձավոր Սփյուռքի կրթամշակութային աջակցության», «ԱՊՀ տարածաշրջանային հայկական համայնքների կրթամշակութային խնդիրների լուծմանն օժանդակության», «Ավստրալիայի հայ համայնքների կրթամշակութային խնդիրների լուծմանն աջակցության» ծրագրերը:

2014թ սփյուռքի հիմնախնդիրների վերաբերյալ ՀՀ սփյուռքի նախարարության պատվերով ՀՀ ԳԱԱ ինստիտուտները, ԵՊՀ-ն և այլ գիտական կենտրոններ իրականացրել են հետազոտություններ, հրատարակվել է 12 գիրք:

2500 տպաքանակով հրատարակվել է 2013թ. «Սփյուռք» տարեգիրքը, երկու նոր տարբերակով արևելահայերեն-ռուսերեն և արևմտահայերեն-անգլերեն:

Իրականացվել են շուրջ 4 տասնյակ մշակութային միջոցառումներ:

Գործել են նախարարության 6 կայքերը, 2014թ. մեկնարկել և հեռարձակվել է հայոց լեզվի հեռուստադպրոցի 34 հեռուստադաս, տարբեր հեռուստաայլքներով հեռարձակվել է նախարարության ավելի քան 150 հաղորդում և կազմակերպվել է 160-ից ավելի տաղավարային հաղորդում, նախարարության պատվերով նկարահանվել է 10 ֆիլմ, նույնքան սոցիալական գովազդ: Միջուռքի 20 երկրների հայ համայնքների հետ կազմակերպվել է ավելի քան 20 հեռակոնֆերանս:

2014թ. **Սփյուռք է առաքվել է 40.000 կտոր դասագիրք և ուսումնաօժանդակ նյութեր: Տարվա ընթացքում սփյուռքյան կառույցների, հայաստանյան կազմակերպությունների ու անհատների տրամադրվել է 12.000 կտոր նախարարության պատվերով հրատարակված գրքեր, ձայնասկավառակ, խտասալիկ, ՀՀ պետական խորհրդանշանների փաթեթներ և այլն:**

Մահացել է Վահան Հովհաննիսյանը

28.12.2014



Դեկտեմբերի 28-ին երկարատև և ծանր հիվանդությունից մահացել է ՀՅԴ-ական հայտնի գործիչ, Գերմանիայում Հայաստանի դեսպան Վահան Հովհաննիսյանը:

Վահան Էդուարդի Հովհաննիսյանը ծնվել է 1956թ. օգոստոսի 16-ին, Երեւանում:

Վահան Հովհաննիսյանը 1978 թվականին ավարտել է Մոսկվայի մանկավարժական համալսարանը գիտական կոչումներով պատմության և հնագիտության մեջ: 1978-1980 թթ. ծառայել է խորհրդային բանակում: Հաջորդ ինը տարիները «Էրեբունի» թանգարանում եղել է գիտաշխատող և գիտահետազոտական բաժնի վարիչ: 1989 թ. Հովհաննիսյանը գիտաշխատող է եղել ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտում:

1990-1992 թթ. Վահան Հովհաննիսյանը մասնակցել է Արցախի ազատագրական պայքարին: Նաև անդամագրվել է ՀՅԴ Հայաստանի Կենտրոնական կոմիտեին և 1992-1995, անդամ է եղել ՀՅԴ-ի բյուրոյին: 1995-1998 թթ. բանտարկված է եղել՝ քաղաքական դրդապատճառներով (հետագայում չհաստատված մեղադրանքներով):

1998-1999 թթ. աշխատել է ՀՀ նախագահի խորհրդական, տեղական ինքնակառավարման հարցերով հանձնաժողովի նախագահ:

1999-2003 թթ.՝ ԱԺ պատգամավոր է եղել (թիվ 17 ընտրատարածք): Ընտրվել է ՀՀ ԱԺ պաշտպանության, ազգային անվտանգության և ներքին գործերի մշտական հանձնաժողովի նախագահ:

2003, 2007, 2012 թվականներին ԱԺ պատգամավոր է ընտրվել ՀՅԴ համամասնական ընտրացուցակով: Հունիսի 12, 2003-ին և 2007-ին ընտրվել է ԱԺ նախագահի տեղակալ, հրաժարական է ներկայացրել 2008թ.: Հովհաննիսյանը ՀՅԴ-ի թեկնածուն էր 2008 Հայաստանի նախագահական ընտրություններին:

2013թ. դեկտեմբերի 28-ին ՀՀ նախագահի հրամանագրով նշանակվել է Գերմանիայի Դաշնային հանրապետությունում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

Այսուհետ ամեն տարի Ամանորի գիշերը կկատարվի նոնօրինք

29.12.2014



Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ի տնօրինությամբ հաստատվել է օրհնության նոր կարգ, որի համաձայն՝ ամեն տարի Ամանորի գիշերը՝ ժամը 00.30-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում և Հայ Եկեղեցու բոլոր եկեղեցիներում Գոհաբանական մաղթանքի ավարտին կկատարվի նոնօրինքի արարողություն:

Հայկական ավանդության մեջ նուրը՝ իբրև ազգային խորհրդանիշ, կրում է կյանքի, ծաղկունքի և առատության իմաստը: Քրիստոնեական խորհրդաբանության մեջ նուր խորհրդապատկերն է Հիսուս Քրիստոսի հեղած արյան՝ խորհրդանշելով նաև Տիրոջ հրաշափառ Հարությունն ու Աստծու շնորհների բազմազանությունը: Հայոց Եկեղեցու վարդապետների և հայրերի մեկնություններում նուրը ներկայացվում է նաև այն խորհրդաբանությամբ, որ նռան հատիկների պես Եկեղեցու անդամները շատ ու բազմատեսակ են, սակայն պատված են նռան նման պինդ կեղևով՝ միավորված լինելով մեկ Եկեղեցու մեջ:

Այս պատճառով նռան խորհրդաբանությունը լայնորեն օգտագործվել է հայկական եկեղեցական ճարտարապետության, արվեստի և մանրանկարչության մեջ:

Հորդորում ենք մեր ժողովրդին մասնակցելու Գոհաբանական մաղթանքին և նոնօրինքին:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

Արցախ

**Դակարի գազաթանաժողովը
բանաձև է ընդունել Լեռնային
Ղարաբաղի խնդրով**

01.12.2014



Դակարում ընթացող Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության XV-րդ գազաթանաժողովն ընդունել է Ճգնաժամային իրավիճակների հանգուցալուծման եւ խաղաղության ամրապնդման վերաբերյալ եզրափակիչ բանաձևեր, որտեղ Հայաստանի առաջարկությամբ ամրագրվել է Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության անդամ պետությունների լիակատար աջակցությունը՝ դարաբաղյան հակամարտության կարգավորման ուղղությամբ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների կողմից գործադրվող ջանքերին: «Կոչ ենք անում հակամարտության բոլոր կողմերին զերծ մնալ ուժի եւ ուժի սպառնալիքի կիրառումից, ինչը կարող է վտանգել կարգավորման խաղաղ գործընթացը, շարունակել բանակցությունները Մինսկի խմբի համանախագահների միասնական եւ անբաժան հենք հանդիսացող առաջարկությունների հիման վրա՝ մասնավորապես՝ ուժի եւ ուժի սպառնալիքի չկիրառման, տարածքային ամբողջականության եւ ժողովուրդների իրավահավասարության եւ ինքնորոշման իրավունքի սկզբունքների հիման վրա», – ամրագրված է Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության XV-րդ գազաթանաժողովի եզրափակիչ բանաձևում:

[Լուրեր Հայաստանից - NEWS.am](http://www.news.am)

**Ամերիկացի կոնգրեսականները
շեշտադրել են ԼՂՀ ճանաչման
անհրաժեշտությունը (ֆոտո)**

03.12.2014

Վաշինգթոնում աշխատանքային այցով գտնվող ԼՂՀ Ազգային ժողովի նախագահ Աշոտ Դուլյանը դեկտեմբերի 2-ին ԱՄՆ Կոնգրեսում առանձին հանդիպումներ է ունեցել Կոնգրեսի անդամներ Լինդա Սանչեսի, Ադամ Շիֆի, Դեվիդ Միսիլինի եւ Կոնգրեսի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Էդ Ռոյսի հետ եւ նրանց ներկայացրել Արցախի եւ տարածաշրջանի վերջին զարգացումները:



Աշոտ Դուլյանը բարձր է գնահատել Կոնգրեսի անդամների անաչառ եւ համարձակ դիրքորոշումն ադրբեջանա-դարաբաղյան հակամարտության կարգավորման հարցում, մասնավորապես, հուլիս-օգոստոս ամիսներին եւ նոյեմբերի 12-ին ադրբեջանական կողմի կազմակերպած սադրանքներին արագ արձագանքումը եւ դատապարտումը: Հանդիպումների ընթացքում գրուցակիցներն անդրադարձել են Միացյալ Նահանգների եւ Արցախի միջև հարաբերությունների ընդլայնման հեռանկարներին, կարելու էլ քաղաքական ու տնտեսական կապերի զարգացումը, ինչպես նաև քննարկել սոցիալական ծրագրերի իրականացման հնարավորությունները:

Նույն օրն ԱՄՆ Կոնգրեսում տեղի է ունեցել ԼՂՀ անկախության 23-րդ տարեդարձին նվիրված միջոցառումը: Հանդիսավոր երեկոն կազմակերպել էին Կոնգրեսի հայկական հարցերով հանձնախումբը, ԱՄՆ-ում Հայաստանի Հանրապետության դեսպանատունը, Միացյալ Նահանգներում Արցախի Հանրապետության մշտական ներկայացուցչությունը եւ Ամերիկայի Հայ դատի հանձնախումբն ու Ամերիկայի հայկական համագումարը: Միջոցառմանը մասնակցել են մի շարք կոնգրեսականներ, ովքեր իրենց ելույթներում շնորհավորել են ԼՂՀ ժողովրդին եւ միջոցառման մասնակիցներին, անդրադարձել պետականաշինության ժողովրդավարական ընթացակարգերին եւ անկախ պետականության կառուցման գործում Արցախի ձեռքբերումներին: Կոնգրեսականների ելույթներում զերակշռում էր Արցախի Հանրապետության միջազգային ճանաչման անհրաժեշտության շեշտադրումը: Միջոցառմանը ելույթ են ունեցել նաև ԱՄՆ-ում ՀՀ դեսպան Տիգրան Սարգսյանը եւ ԼՂՀ մշտական ներկայացուցիչ Ռոբերտ Ավետիսյանը: Երեկոյին մասնակցում էին Վաշինգտոնի եւ մերձակա նահանգների հայ համայնքի ներկայացուցիչներ:

ԼՂՀ անկախության հերթական տարեդարձին նվիրված միջոցառման գլխավոր բանախոսն Արցախի խորհրդարանի նախագահ Աշոտ Դուլյանն էր: Իր ելույթում Ա. Դուլյանը մասնավորապես ընդգծել է, որ Հարավային Կովկասում տեւական խաղաղության ու կայունության հաստատման միակ ճանապարհը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության փաստացի անկախության միջազգային ճանաչումն է եւ անվտանգության միջազգային երաշխիքներով նրան օժտելը: Խորհրդարանի նախագահի խոսքերով Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում լավ գիտեն ազատության եւ այն պաշտպանելու ելած ժողովրդի

անվտանգության ու խաղաղության գինը, ինչի համար Արցախը ստիպված է պայքարել ամեն օր: Հանդիպումներին եւ միջոցառումներին ԼՂՀ ԱԺ նախագահին ուղեկցում են ԱՄՆ-ում եւ Կանադայում ԼՂՀ Մշտական ներկայացուցիչ Ռոբերտ Ավետիսյանը եւ ԼՂՀ ԱԳՆ միջազգային կառույցների ու հումանիտար համագործակցության վարչության պետ Արմինե Ալեքսանյանը:

Արեւմտյան Հայաստան

Բիթլիսում արդեն պաշտոնապես կա Վիլյամ Սարոյանի անվան փողոց

26.12.2014

Թուրքիայի Բիթլիսի նահանգապետ Օրհան Օզթուրքը վերջապես հաստատել է Բիթլիսի փողոցներից մեկը հայ գրող Վիլյամ Սարոյանի անունով վերանվանելու որոշումը: Թուրքական Milliyet-ի փոխանցմամբ՝ Բիթլիսի նահանգապետարանը հայտարարություն է տարածել, որտեղ նշվել է, թե նահանգապետ Օրհան Օզթուրքը ստորագրել է Բիթլիսի քաղաքապետարանի կողմից մի շարք թաղամասեր եւ փողոցներ վերանվանելու մասին որոշումները:



Նշվել է, որ նահանգապետը հաստատել է նաեւ Բիթլիսի փողոցներից մեկը հայ գրող Վիլյամ Սարոյանի անունով վերանվանելու որոշումը: Այսինքն, Բիթլիսում արդեն պաշտոնապես կա Վիլյամ Սարոյանի անունով փողոց: Նշենք, որ ամիսներ առաջ Բիթլիսի քաղաքապետարանի ավագանին ձայների մեծամասնությամբ որոշվել էր Սափքոր փողոցը, որտեղ ապրել են Սարոյանների ընտանիքը, վերանվանել Վիլյամ Սարոյանի անունով: Լուսանկարները՝ Նարեկավանք տուրի

Թուրքական գյուղի բնակիչները կամավոր խնամում են հայերի գերեզմանները

25.12.2014

Թուրքիայի Յոզգաթ նահանգի Բուրունքչլա գյուղի բնակիչները խիստ առանձնացել են Թուրքիայի շատ բնակավայրերի բնակիչներից: Նրանք կամավոր խնամում եւ մաքրում են հայերի գերեզմանները՝ օրինակելի վարքագիծ ցույց տալով:



Թուրքական Radikal-ի փոխանցմամբ՝ Յոզգաթի Սարըքչալա շրջանի Բուրունքչլա գյուղի բնակիչները հիշում են ժամանակին իրենց հետ միասին ապրած հայ հարեւաններին եւ լավ հիշողությունները ստիպում է նրանց պահպանել նախկին հարեւանների գերեզմանները: Բուրունքչլայի գյուղապետ Նեջաթի Յաչընը նշել է, թե իրենք մինչեւ 1966 թվականը միասին են ապրել հայերի հետ: Նրա խոսքով՝ հեռանալուց հետո հայերի մի մասը ամեն տարի այցելում են թե գյուղացիներին, թե իրենց հարազատների գերեզմաններին: «Նախկին քայմաքամը մեր հայ եղբայրների գերեզմանոցը պատով շրջապատեց, որ անձանոթները չվնասեն գերեզմանները: Դրանից հետո էլ գյուղացիները կամավոր խնամում եւ մաքրում են հայերի գերեզմանները», -ասել է գյուղապետը: Լուրեր Հայաստանից - NEWS.am

Միլյուրք



Դատապարտում ենք

Աշխարհի բոլոր երկրներում առկա են կաշառակերությունն ու ոտնձգությունները զանազան մակարդակներով, սակայն մեր հայերիս համար չափազանց ցավալի է, երբ երազային մեր Հայրենիքում գիշատիչ գայլերի նման որոշ իշխանավորներ երկիրը տարել են կործանման եզրին:

Ազգային Ժողովում և զանազան հանգամանքներում, երբ այդպիսիները շկարողացան հանդուրժել ընդդիմադիր ուժի օրինական հարցադրումները, երբ նրանք ի գործու չեղան պատասխանել մի քանի տասնյակ յուրջ եւ հիմնական հարցերին, դիմեցին իրենց վերջին ֆաշիստական միջոցներին, աշխատեցին ազատատենչի և արդարություն պահանջողին ահաբեկել, բանդարկել, ծեծել դարանակալած ավազակների նման:

Հայկական Ուսումնասիրությունների Կենտրոնը գիտակցում եւ խորապես հավատում է, որ Հոկտեմբերի 27-ի ազգային ոճրագործությունը քողարկված մնալով և նրա իսկական հրահրողներին ու կազմակերպիչներին

չպատժելով, սպասելի էր, որ այդպիսի անօրինականություններ օրըստօրե զարգանան եւ արդարությունը բոլորովին ի չիք դառնա այդպիսի անօրինական իշխանությունների կողմից, ուսի գալիս ենք խստիվ դատապարտելու Ազգային Ժողովի պատգամավոր Արամ Մանուկյանի և ազատամարտիկ հայ հայրենանվեր այրերի դեմ գործած այդպիսի զագրելի ոտնձգությունները: 1999 թվականի հոկտեմբերի 27-ից հետո, Հայ Ժողովրդի պատմության էջերը արդեն մթազնած ու սեւ են միջին այն օրը, երբ Հայոց արևը նորից կծագի եւ լույս ու հույս և հավատք կբերի մեր չարքաշ ժողովրդին ու դարերով տանջված մեր սրբազան Հայրենիքին:

Հայկական ՌԻսումնասփրությունների Կենտրոն
Տորոնտո

Միջազգային

Բոլիվիայի խորհրդարանը Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձեւ է ընդունել

30.11.2014



Բոլիվիայի խորհրդարանի Օրենսդիր ժողովը միաձայն բանաձեւ է ընդունել՝ դատապարտելով Հայոց ցեղասպանության ժխտողական քաղաքականությունը եւ մարդկույան դեմ կատարված հանցագործությունը:

[Prensa Armenia](#)-ի փոխանցմամբ, բանաձեւն ընդունվել է նոյեմբերի 26-ին կայացած նիստում:

Սենատի գործող նախագահ Չոնիա Գարդիա Մելգարր հայտարարել է, թե «բանաձեւն ընդունվել է ԱԳՆ հավանությամբ, Սենատի եւ պատգամավորների պալատի կողմից»:

«Մենք մեր լիակատար աջակցությունը, համերաշխությունն ու բարեկամությունն ենք հայտնում հայերին եւ քրդերին, քանի որ մեր Պետական Սահմանադրությունը, որ օրենքների օրենքն է, ոչ է ասում խորականությանը, մարդու իրավունքների խախտումներին եւ ցեղասպանություններին», - նշել է նա:

Նա հավելել է, որ նկատի ունեն 1915-23 թվականներին հայերի դեմ Թուրքիայի պետության գործած հանցանքը:

Բանաձեւի ամբողջական տեքստը հետեւյալն է՝ «Բոլիվիայի Օրենսդիր ժողովը կհսում եւ գորակցում է հայ ժողովրդի պահանջատիրական պայքարը՝ հանուն մարդու իրավունքների պաշտպանության, ճշմարտության եւ արդարության հաստատման: Ժողովը հայտարարում է իր գորեղ հանձնառությունը մարդու իրավունքների եւ արդարության պաշտպանության ուղղությամբ եւ դատապարտում Հայ ժողովրդի դեմ գործադրված ցեղասպանության եւ կրած տառապանքների ժխտման քաղաքականությունը»:

Բոլիվիայի Սենատի փոխնախագահ. Մեր գորակցությունն ենք հայտնում հայ ժողովրդին

01.12.2014

Նոյեմբերի 30-ին Բուենոս Այրեսի Հայ Առաքելական Սուրբ Գրիգոր Լուսավորիչ մայր տաճարում կիրակնօրյա պատարագից հետո տեղի ունեցավ Բոլիվիայի Սենատի եւ Պատգամավորների պալատի կողմից՝ Օսմանյան կայսրության իրականացրած 1915թ. Հայոց ցեղասպանության ճանաչման վերաբերյալ փաստաթղթերը Արգենտինայում ՀՀ դեսպան Վահագն Մելիքյանին եւ Արգենտինայի Հայոց թեմի առաջնորդ, Գերաշնորհ Տեր Գիսակ Արքեպիսկոպոս Մուրադյանին հանձնելու արարողությունը:

ԱԳՆ մամուլի ծառայությունից հայտնում են, թե միջոցառմանը, որպես հատուկ հյուրեր, հրավիրված էին Բոլիվիայի Սենատի նախագահի տեղակալ, Սենատի գործող նախագահ Սոնյա Գուարդիա Մելգարր եւ Պատգամավորների պալատի պատգամավոր Ֆարիդես Վալա Սուարես դե Սուարեսը:

Իր ելույթում Տիկին Սոնյա Մելգարր, անդրադառնալով Բոլիվիայի խորհրդարանի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչմանը, նշեց, որ Բոլիվիայի ժողովուրդն ու իշխանությունները ոչ միայն իրենց համերաշխությունն ու գորակցությունն են հայտնում հայ ժողովրդին՝ հանուն արդարության պայքարի գործում, այլ նաեւ դատապարտում են 1915թ. Օսմանյան կայսրության կողմից իրականացված Հայոց ցեղասպանության փաստի ժխտողականության ցանկացած դրսեւորում: Նա ընդգծեց նաեւ, որ միայն Հայոց ցեղասպանության ճանաչման եւ դատապարտման միջոցով հնարավոր կլինի ազգերի եւ պետությունների կյանքում կանխարգելել նման ոճիրների կրկնությունը:

Իր ելույթում դեսպան Մելիքյանը Հայաստանի Հանրապետության իշխանությունների անունից խորին երախտագիտություն հայտնեց Բոլիվիայի ժողովրդին եւ իշխանություններին այս կարեւոր եւ պատմական իրադարձության կապակցությամբ: Ըստ դեսպանի՝ Հայոց ցեղասպանության հարյուրամյա տարելիցի նախաշեմին Բոլիվիայի կողմից այս ճանաչումը նոր էջ է բացում Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման եւ դատապարտման գործընթացում եւ եւս մեկ անգամ ապացուցում, որ ժխտողականության եւ մերժողականության քաղաքականությունը ի գորու չէ պայքարելու արդարության եւ ճշմարտության հաստատման դեմ:

Բոլիվիայի խորհրդարանի երկու պալատների կողմից ընդունված փաստաթղթերում մասնավորապես հայտարարվում է. «1915 թվականի ապրիլի 24-ի գիշերը Օսմանյան կայսրության իշխանությունները, «Միություն եւ առաջադիմություն» կուսակցության առաջնորդները,

երիտօրքերը սկսեցին հայ մտավորականների, քաղաքական գործիչների, գիտնականների, գրողներին, արվեստի գործիչների, հոգեւորականների, բժիշկների, հասարակական գործիչների եւ մասնագետների ձերբակալությունները, ծրագրված արքայազնները, իսկ այնուհետեւ պատմական Արեւմտյան Հայաստանի եւ Անատոլիայի տարածքներում հայազգի քաղաքացիական բնակչության զանգվածային ջարդերը»:

Խորհրդարանի երկու պալատները «հաստատում են իրենց հավատարմությունը մարդու իրավունքներին, ճշմարտության եւ արդարության արժեքներին, արտահայտում են իրենց գորակցությունը եւ դատապարտում Հայոց ցեղասպանության եւ հայ ժողովրդի դեմ իրականացված մարդկային ծանր հանցագործության ժխտողականության քաղաքականությունը»:



